ՆՈՐԱՅՐ ՊՈՂՈՍՅԱՆ

# Բառգրքույկ հայերենի ավանդական ուղղագրության

ԵՐԵՎԱՆ - 2009

ՆՈՐԱՅՐ ՊՈՂՈՍՅԱՆ

# Բառգրքույկ հայերենի ավանդական ուղղագրության



Երևան - 2009

ՀՏԴ 801.3=919.81
ԳՄԴ 81.2Հ-4
Պ 797

Հրատարակության է երաշխավորել ԵՊՀ հայոց լեզվի պատմության ամբիոնը:
Խմբագիր՝ բանասիր. գիտ. դոկտոր, դոց. Գուրգեն Մանուկյան, գրախոս՝ բանասիր. գիտ. թեկնածու, դոց. Հենրիկ Ավետիսյան:

ՊՈՂՈՍՅԱՆ ՆՈՐԱՅՐ
Պ 797 Բառգրքույկ հայերենի ավանդական ուղղագրության.-Երևան: 2009, 38 էջ:

Բառգրքույկում համառոտ ներկայացված են հայերենի ավանդական ուղղագրության կանոնները և գրության բարդություն ունեցող հիմնական խումբ բառերը: Այն ունի ուսուցողական նշանակություն և ուղղված է նախ և առաջ գրաբարն ու հին ուղղագրությունը ուսանել ցանկացողներին:

ԳՄԴ 81.2Հ-4

ISBN 978-9939-53-396-4

© Պողոսյան Ն.Բ., 2009

# Երկու խոսք ընթերցողին

Սույն բառգրքույկը ստեղծվել է ուսուցողական նպատակներով: Գրաբարի դասավանդման ժամերին ուղղագրական որևէ կանոն մատուցելիս շարունակ կարելի է առնչվել հետևյալ հարցին՝ «Ինչպե՞ս որոշենք, թե որ բառերն են գրվում նշված կանոնով»: Հաճախ պատասխանն այն է լինում, որ ոչ թե կանոնը, այլ ավանդույթն է թելադրում այս կամ այն բառի գրությունը:

Եվ ահա բառգրքույկում հավաքվել են այն հիմնական խումբ բառերը, որոնք արդի ուղղագրական կանոններից տարբերություն ունեն և որոնք անսովոր են արևելահայ ուղղագրությունը կիրառողների համար:

Անշուշտ բառգրքույկը չի սպառում ավանդական ուղղագրական բառապաշարը, բայց կարծում ենք կարող է ուղեցույց լինել հին ուղղագրությունն ուսանել ցանկացողների համար: Այստեղ կարելի է գտնել հիմնական արմատները, նրանցով կազմված և հաճախակի հանդիպող բառերը: Երբեմն կարելի է գտնել նաև բացատրական համառոտ դիտարկումներ:

Բառաշարքերում կհանդիպենք գրաբարյան (յաչս, վաղիւ), բայց նաև՝ ուշ շրջանի և նոր օրերի, այդ թվում՝ արևմտահայերեն (համանուագ, յամենալ) բառեր:

Պետք է իմանալ, որ հավասարապես կիրառելի են ***եւ-և*** տառերը, սակայն բառարանում նպատակահարմար ենք դիտել բառերը ներկայացնել ***եւ*** ձևով՝ դրա ընթերցանությանը վարժվելու համար: Բացարձակ մեծամասնությամբ տրվում են բառերի ուղիղ և ոչ թե թեքված (տեսայ, եկայ) ձևերը: Բառգրքույկում առկա զուգաձևություններից հանձնարարելին առաջինը նշված տարբերակն է:

Սովորաբար բարդություն են ներկայացնում **ո-օ**, **ե-է** տառերի, բառասկզբի յ-ի գրությունները: Ուստի բառգրքույկում առավել շատ կարելի է հանդիպել նման գրություն ունեցող բառերի: Սովորողների աշխատանքը հեշտացնելու նպատակով առանձին խմբերով ներկայացվում են նաև բառամիջում **օ**, **է** ունեցող՝ առավել տարածված արմատների ու բառերի ցանկերը:

Հեղինակը նպատակ չունի մտնել ուղղագրական բանավեճի մեջ: Հին ու նոր ուղղագրությունների մասին հայտնի բանավեճը բառգրքույկ չտեղափոխելու համար մենք շրջանցում ենք հայերենի դասական-ավանդական-մաշտոցյան-հին դասակարգումները, ինչպես նաև նոր-բոլշևիկյան-աբեղյանական և այլ կարգի պիտակներն ու բնորոշումները և գերադասում ենք պարզապես՝ արդի ուղղագրություն և ավանդական ուղղագրություն եզրերը:

Վերջին շրջանում ավանդական ուղղագրության հանդեպ հետաքրքրության աճ է նկատվում, ուստի կարծում ենք ներկայացվող բառգրքույկը կարող է օգտակար լինել ոչ միայն բուհերի ու ճեմարանների սաների համար:

Բառգրքույկում աշխատել ենք, հենվելով աղբյուրների, հեղինակավոր բառարանների ու աշխատությունների վրա, բառերի գրությունը ներկայացնել ըստ հնարավորին զերծ զուգաձևություններից, որտեղ որ դա հնարավոր է: Այդպիսով էլ՝ բառգրքույկը կարող է իր համեստ նպաստը բերել ավանդական ուղղագրությունը միօրինակ տեսնելու ջանքերին, մանավանդ՝ արևմտահայերեն տպագիր միավորներում առկա ուղղագրական անմիօրինակության, հաճախ՝ շփոթի պարագայում (այս խնդրին մանրամասն անդրադառնում է Ռ.Սաքապետոյանն իր «Արևմտահայերենի և արևելահայերենի բառապաշարային առանձնահատկությունները» գրքում): Ուրեմն՝ ներկայացվող բառգրքույկը կարող է օգտակար լինել ներկայումս հին ուղղագրությամբ տպագրվող գրքերի ուղղագրական միօրինականացման համար:

Իսկ նրանց, ովքեր ցանկություն ունեն առավել ամբողջական պատկերացում կազմել ավանդական ուղղագրության մասին, առաջարկում ենք թերթել նաև վերջին շրջանում տպագրված հետևյալ գրքույկները, բառարաններն ու հրապարակումները՝


Բարսեղյան Հովհաննես, Հայերենի ուղղագրության հարցերը հայագիտության և գրականության դասականների քննությամբ, Երևան, 2005, 102 էջ:

Գալֆայեան-Փանոսեան Հիլտա, Մեսրոպեանը ազգային միասնութեան նախապայման, Երևան, 2005, 277 էջ:

Գոճանեան Հ.Պօղոս, Ի սէր մայրենի լեզուի, Վիեննա-Երևան, 2002, 31 էջ:





Գոճանեան Հ.Պօղոս, Ուղեցոյց դասական ուղղագրութեան, Վիեննա-Երևան, 2006, 46 էջ:

Իշխանեան Ռաֆայէլ, Հայերէն դասական ուղղագրութեան կանոններ, Երևան, 2007, 27 էջ:

Կատվալյան Վիկտոր, Մեսրոպյան Է, Ե գրերի ուղղագրությունը և հնչյունական արժեքը, Երևան, 2006, 101 էջ:

Համբարձումյան Վազգեն, Հայոց լեզվի դասական ուղղագրության հիմունքները, Երևան, 1993, 55 էջ:

Հայերէն ուղղագրութեան գործնական ձեռնարկ, Պլովդիվ, 1991, 51 էջ:

Ղազարյան Ռուբեն, Գրաբարի բառարան, հտ.Ա-Բ,Երևան, 2000:

Մադոյան Արշակ, Հայագիտության դասականները միասնական ուղղագրության մասին, Երևան, 2005, 128 էջ:

Մինասեան Մարտիրոս, Օգնութիւն ուղղագրութեան վերականգնմանը, Ժնև, 2005, 79 էջ:

Չոլաքեան Յակոբ, Հայերէնի աւանդական ուղղագրութիւն, Հալէպ, 2000, 96 էջ:

Պողոսյան Նորայր, Հայերենի հին և նոր ուղղագրությունների ուսուցման հարցերը, «Հայագետ» հանդես, Երևան, 2007, թ. 1, էջ 5-12:

Սաքապետոյան Ռ., Արևմտահայերեն-արևելահայերեն ուղղախոսական-բացատրական բառարան, Երևան, 2000, 337 էջ:

Ուղղագրական բառագրքույկ (10 հազար բառ), Թեհրան, 1999, 173 էջ:

Քերովբեան Գեղամ, Հայերէն բառագիրք աշխարհաբար լեզուի, Ստամբուլ, 2002, 564 էջ:


* * *

Բառգրքույկից օգտվելիս կարծում ենք ընթերցողը առանձնակի բարդությունների չի հանդիպի, ուստի կառուցվածքի մասին հարկ չհամարեցինք խոսել: Ցանկանում ենք շնորհակալություն հայտնել Վահե և Արշակ Պողոսյաններին, Քրիստինե Այվազյանին՝ բառացանկերի նախապատրաստման ընթացքում հեղինակին ցույց տված օգնության համար:

Ն.Պ.

## Ավանդական ուղղագրության և արտասանության կանոններ

Մինչ բառաշարքերին անցնելը հարմար նկատեցինք համառոտ ներկայացնել ավանդական և արդի ուղղագրությունների գրության ու արտասանության հիմնական տարբերությունները: Այսպես.

1. **Վ** տառը գրվում է երկու դեպքում՝ ա) բառասկզբում՝ վաստակ, վէպ, վստահ, նաև՝ անվերջ, զօրավար, կառավարել, բ) **ո** ձայնավորից հետո՝ ժողով, հովանի, սովորել և այլն: **Ո**-ից հետո վ արտասանելիս ւ չի գրվում, այլ միայն՝ վ:

2. Բաղաձայնից հետո և ձայնավորից առաջ վ լսվելիս գրվում է **ու**՝ Աստուած, զինուոր, նուագ: **Ու**-ով են գրվում նաև **իւ** և **ու** վերջացող բառերի բաղադրված ձևերը՝ ազնիւ-ազնուական, թիւ-թուական, հովիւ-հովուել, լեզու-լեզուագէտ, մեղու-մեղուաջան: **Ու** են ստանում նաև աշխարհաբարի կրավորական բայերը՝ ազատուել, փակուել: **Ու** կրավորական ածանցի համար կա նաև ւ գրելու առաջարկը՝ գրւել, լցւել:

3. **Ւ**, ւ տառը գրվում է բառամիջում և բառավերջում **ա**, **ե**, ի ձայնավորներից հետո՝ աւելի, գաւիթ, բեւեռ, կարեւոր, թիւ, հաշիւ, բարեւ, լաւ և այլն:

4. Բառասկզբում ւ տառ չի գրվում: **Օ**, է ձայնավորներից հետո ևս ւ չի գրվում:

5. Բաղաձայնից առաջ **եւ** և **իւ** կարդացվում են **յու**՝ աղբեւր, ալեւր, անկիւն, նաև մի քանի ածանցներում՝ զօր***ութիւն***, հն***չիւն***:

6. **Աւ** կապակցությունը բաղաձայնից առաջ կարդացվում, գրաբարի ուշ շրջանից նաև գրվում է **օ**՝ աւր-օր, աղաւթք-աղօթք, առաւաւտ-առաւօտ: Այս կանոնից շեղվում են՝ նաւթ, աղաւնի, քաւղեայ, նաև բարբառային՝ հաւկիթ բառը: Բառացանկում ըստ հնարավորին ամբողջական ներկայացված են բառամիջում **օ** ունեցող արմատները: **Օ**-ով են գրվում նաև մի քանի ածանցներ՝ կտր***օն***, հաւան***օրէն***:

7. Բառասկզբում ըստ անհրաժեշտության կարող է գրվել ինչպես **ե** (=յե)՝ երանի, երազ, այնպես էլ **է**՝ էակ, էութիւն:

8. Բառավերջում միշտ պետք է գրել **է**՝ բազէ, մարգարէ, Հռիփսիմէ:

9. Բառամիջում ավանդական ուղղագրությունը ունի **է** այն դեպքերում, երբ՝ ա) բառը բարդվելու կամ ածանցվելու դեպքում այդ **է**-ն դառնում է **ի**՝ դէտ-դիտել, շէն-շինութիւն, գէր-գիրանալ: Այս կանոնից շեղվում են դեւ-դիւական և թեկն-թիկունք բառերը (վերջինի համար կա նաև թէկն ձևը): Նցական մի շարք բարդություններում այս **է**-ն չի դառնում **ի**՝ կէսօր (և ոչ թե կիսօր), օրէնսգէտ: բ) Եթե այդ **է**-ն առանձին վանկ է կազմում՝ մարգարէական, քրիստոնէութիւն: գ) **Է** գրվում է նաև բայական մի շարք ձևերում՝ գրէի, գրէիր, գրէր…, գրէք, պիտի գրէիք և այլն, դ) խոսակցական ծագում ունեցող մի շարք բառերում՝ հէր (հայր), մէր (մայր), երեխէք, հրէս, հէնց, գէլ, ծէր (ծայր) և այլն, ե) մի շարք ածանցներում՝ հայ***երէն***, հռոմ***արէն***, ոսկ***եղէն***, հաւան***օրէն***, ծակոտ***կէն***, կողպ***էք***, կաղամ***չէք***, ծու***էն***, շահ***աւէտ***:

10. Բառամիջում (ոչ վերջին վանկում) բաղաձայնից առաջ գրվում է **ե**՝ բերան, ճեմարան, սեղան: Այսպես են նաև **ի**-ով վերջացող բառերի բարդությունները՝ այգեպան, բարեկամ, թեև գրավոր աղբյուրներում հանդիպում են նաև այգէպան, բարէկամ ձևերը: Առավել հաճախ **է** գրվում է ձայնավորով սկսվող երկրորդ բաղադրիչից առաջ՝ հոգէառ, ոսկէօղ: Նման հանձնարարելի զուգաձևությունների կարելի է հանդիպել նաև մեր ներկայացվող բառացանկերում:

11. **Եա** կապակցությունը պետք է կարդալ **յա**՝ մատեան, առաքեալ, Մամիկոնեան:

12. Ավանդական ուղղագրության **ոյ** կապակցությունը բաղաձայնից առաջ պետք է կարդալ **ույ**՝ լոյս, հաճոյք, առոյգ:

13. Բառավերջում **ա** և **ո** ձայնավորներից հետո գրվում է յ, որ բազմավանկ բառերում ներկայումս չի ընթերցվում՝ արքայ, հսկայ, երե-

կոյ, մեծարգոյ։ Այս յ-ն գրվում է նաև բառամիջում հաջորդող **ե**-ից առաջ՝ դայեակ, ախոյեան, Սարոյեան։ Կանոնից շեղում են արձանագրում մի քանի խումբ բառեր. անձնանուններ՝ Երեմիա, Աննա, նաև բայի հրամայական ձևերը՝ ասա՛, կեցո՛, այլ բառեր՝ սա, դա, նա, նոքա, ապա, ահա և այլն։

14. Կանոնների մի մասը վերաբերում է յ-ի գրությանը, որ բառասկզբում արտասանվում է **հ**՝ Յիսուս, յաջորդ, յայտնի։ Դրանց մի մասը **ի**(յ) նախդրային ծագում ունի։ Պետք է հիշել, որ բաղաձայնից առաջ սովորաբար գրվում է **հ**՝ հլու, հնազանդ, հրաման, բացի յստակ բառից։ Իսկ ղ-ից առաջ գրվում է **յ**՝ յղի, յղկել։ Բառասկզբի յ-ի ուղղագրական այլ կանոններ չկան, այդ բառերի ցանկը պետք է հիշել, որոնք ներկայացված են բառգրքույկում։ Բացի թերևս այն կանոնից, ըստ որի՝ եթե բառասկզբի **հ**-ն որոշ բարբառներում արտասանվում է **խ** (հաց-խաց), ուրեմն այդ բառերում պետք է գրել **հ**, այլ ոչ թե **յ**։

Գրաբարյան աղբյուրներում հանդիպող բաղաձայնական տարբերակներին ու զուգաձևություններին (պատրիարգ-պատրիարք, գայթակղել-գայթագղել և այլն) չենք անդրադառնում։

Կան մասնակի այլ կանոններ և բացառություններ ևս, բայց վերը նշվածը յուրացնելու դեպքում կարելի է ճիշտ գրել և ընթերցել ավանդական ուղղագրությամբ տեքստերը՝ լինեն դրանք գրաբար, արևմտահայերեն թե արևելահայերեն։

Կարող է թվալ, թե ավանդական ուղղագրությունը խիստ խճողված է կանոններով, դրանց ուղեկցող բացառություններով, սակայն այդ մտավախությունն իրականում առաջանում է ուղղագրությանը նոր-նոր ծանոթանալիս միայն։ Մի փոքր ջանք ներդնելիս այն կարող է դառնալ այլևս դյուրին՝ ընթերցելու ու նաև գրելու համար։

Պետք է հիշել, որ 5-րդ դարում գրեթե առանց բացառության արտասանվում էր այնպես, ինչպես գրվում էր տեքստը։ Հետագա շրջանում է գրության և արտասանության միջև անջրպետ առաջացել, որի պատճառով էլ ուղղագրական բազմաձևություն է ներմուծվել գրավոր աղբյուրներում, վիմագրերում։ Օրինակ՝ հայտնի Վեհամոր Ավետարանում (9-րդ դար) արդեն կան ուղղագրության դասական կանոններից շեղվող բազմաթիվ ձևեր՝ փ**է**սայ, որդւո(**յ**) և այլն։ Հատկապես ուշ միջնադարում նկատվող ուղղագրական անմիօրինակությունը շտկվեց միայն 19-րդ դարի երկրորդ կեսերից հետո, այն էլ՝ ոչ ամբողջությամբ։ Այս մասին մանրամասն կարելի է ծանոթանալ Ս.Գյուլբուդաղյանի «Հայերենի ուղղագրության պատմություն» գրքից (Երևան, 1973թ.)։



Հայաստանում 1922 և ապա 1940 թթ. ուղղագրական փոփոխություններից հետո ձևավորվեց ներկայումս արևելահայ գրավոր խոսքում գործածվող ուղղագրությունը, որին զուգահեռ Սփյուռքի գաղթօջախներում շարունակվում է կիրառվել ավանդական ուղղագրությունը։ Եվ այդպես՝ հայերենի ներկա փուլում ունենք հավասարապես գործածվող 2՝ ավանդական և արդի ուղղագրություններ։ Կարծում ենք՝ գրաբար թե աշխարհաբար, արևմտահայերեն թե արևելահայերեն, բարբառային թե խոսակցական տեքստեր ու բնագրեր ընթերցելիս ժամանակակից հայը պետք է առնվազն ծանոթ լինի ավանդական ուղղագրությանն ու հեշտ ընթերցի այն։ Ահա այդ նպատակին է միտված մեր այս բառգրքույկը։

## -Ա-

Աբեթ
աբեղայ
ագուգայ-խողովակ
ագռաւ
ազատօրէն
ազնիւ
ազնուական
աթաբէկ
աթոռ
ալեակ
ալեւոր
ալեկոծ/ալէկոծ
ալէլուիա
ալիւր/ալեւր
ալոջ-էգ ուլ
ախոյեան
ախոռ
ախորժ
ախտաժէտ/-ժետ
ակադեմիա
ակամայ
ակնդէտ
ակներեւ
ակօս
ահա՛
ահաւասիկ
ահեակ
աղա
աղաբողոն-փիլոն
աղանդեր
աղաւաղել
աղաւնի
աղբիւր/աղբեւր
աղեխարշ/աղէխարշ
աղեկէզ
աղեղ
աղէ՛-հապա՛
աղէկ
աղէտ
աղիւս
աղուամազ
աղուէս
աղուոր
աղօթք, -ել
աղօն-աղուն
աղօտ
աղօրիք
աճիւն
ամբարիաւաճ-սնապարծ, Հպարտ
ամբարտաւան
ամբիոն
ամբոխ
ամեհի
ամենագէտ
ամենօրեայ
ամէն, բայց՝ ամենայն
ամիրայ
ամբոխ
ամոլ-լծակից
ամսօրեայ
ամփոփ
ամօթ
այգեպան
այգեւէտ
այժմեայ
այժմէական
այլապէս
այծեամ(ն)
այր
անամոք
անամօթ
անարժէք
անբաւ
անգիտ
աներեւոյթ
անգէտ
անդեայ-նախիր
անդորր
անզգայ
անզէն
անզօր
անէութիւն
անէծք
անըստգիւտ-անթերի
անթեղ
անթիւ
անիւ
անխնայ
անխօս
անծանօթ
անկիւն
անհաճոյ
անհեթեթ
անձաւ
անձնեայ-խոշոր, նշանավոր
անյագ
անյարիր
անյոգնական
անյողդողդ
անյոյզ



անյիշաչար
անյոյս
անշէջ
անուանի
անպաճոյճ
անվայել
անվաւեր
անվրէպ
անցեալ
անփոյթ
անքէն
անօթ
անօթեւան
անօթի
անօսր-նուրբ, նոսր, պարզ
անօրէն
աշխատասէր
աշխար-լաց ու կոծ
աշխարհացոյց
աշխէտ
աշխոյժ
աշտեայ/աշտէ-նիզակ, տեգ
ապա
ապագայ
ապարօշ
ապացոյց
ապաւէն
ապաքէն-անշուշտ, ստույգ
ապօրինի
առարկայ
առաւել
առաւօտ
առաւօտեան
առաքեալ
առեղ
առեղծուած
առէջ
առթիւ
առիւծ/առեւծ
առյաւէտ
առնէտ
առոգանութիւն
առոյգ
առօրեայ
առօրէական
առօք-փառօք
ասպազէն
ասպարէզ
ասպետ
ստանօր-այստեղ(ի), այժմյան
աստէն-այստեղ(ից)
Աստուած
ատեան
ատենապետ
ատոք-լիքը
արալէզ
արահետ
արգելք
արդեօք
արդէն
արդիւնաւէտ
արեւ
արեւելեան
արժէք
արիւն
արծիւ
արծուի
արմաւենի
արշալոյս
արշաւ
արոյր-դեղին պղինձ
արուեստ
արտախոյր
արտասուել
արտաքոյ-դուրս, հեռու
արտոյտ
արտոր(ե)այ-արտեր
արտօնեալ
արտօսր-արցունք
արքայ
արօս
արօտ
արօր
աւագ
աւազ
աւազան
աւան
աւարտ
աւել(ի)
աւետ(իս)
Աւետարան
աւերել
ափսէ
աքսոր

## -Բ-

Բա՛
բաբէ-ա՛յ, բա՛
բազէ
բազմագոյն
բազմակէտ
բաղեղ
բայ
բանախօս
բանասէր
բանավէճ
բանաւոր
բանողչէք
բանուոր
բարեացակամ
բարեբարոյ
Բարեկենդան
բարեհաճոյ
բարե(ա)ւ
բարիոք/բարւոք-լաւ, բարի
բարօրութիւն
բացակայ
բացայայտ
բացօթեայ
բաւարար
բդե(պ)շխ
բեկանել
բեհեզ/բեհեզ
բեղմնաւոր
բեմ
բեռ(ն)
բերան
բերդ
բերնէբերան
բերողչէք
բեւեկն
բեւեռ
բզէզ
բէժ-վարագոյր, ծածկոց
բէկ
բիւր/բեւր
բիւրեղ
բնաւ
բոլոր
բոկ-բոբիկ
բողոք
բոյթ(ն)-բութ
բոյժ
բոյլ
բոյծ >բուծել
բոյն
բոյս
բոյր
բով
բոսոր
բովանդակ
բորբոք
բորոտ
բոց
բուէճ
բուրաւէտ
բռնազբօսիկ
բրածոյ
բրէտ-իշամեղու
բօթ
բօթել

## -Գ-

Գահավէժ
գահերէց
գահընկէց
գահոյք
գաւազան
գաւաթ
գաւառ
գաւիթ
գեհեն
գեղեցիկ
գեղձ
գեղմ(ն)
գեղջուկ
գեղօն
գետ>գետափ
գետին
գերագոյն
գերան
գերդաստան
գերեզման
գերի
գէզ-բիծ, ճեղք
գէթ/գեթ
գէշ
գէջ-թաց. վավաշոտ
գէս
գէտ >գիտենալ, գրագէտ
գէր >գիրանալ
գինեգործ
գիշեր
գիսաւոր



գիւղ/գեւղ
գիւղորեայք
գիւտ
գլոր
գղթոր
գմբէթ/գմբեթ
գնդապետ
գոգ
գոլ
գոլորշի
գոհ
գողօն
գոմէշ
գոյական
գոյժ
գոյ
գոյն
գոյք
գոնէ
գոչիւն
գոռեխ-վայրի ճանճ
գոռոզ
գովազդ
գովք
գովեստ
գորգ
գործունեայ
գործունէութիւն
գործօն
գորով
գուլպայ
գունաւոր
գուցէ
գռեհ-փողոց. Հրապարակ
գրագէտ
գրաւ
գրաւել
գրեթէ
գրոհ
գրուան-աման
գօշել-գիշատել
գօս-չոր. խեղ
գօտի
գօտեմարտ
գօտեւորել

## -Դ-

Դա
դայեակ
դանայեան
դաստիարակ
դարաւանդ-բարձր տեղ
դարձեալ
դարձուած
դաւ
դեգերել
դեհ-կողմ
դեհպետ-կուսակալ
դեղ
դեղին
դեղձ
դեղորեայք
դեմոն
դեն-կրօն, աղանդ
դեռ
դեսպան
դերասան
դերբուկ-ապառաժ, քարքարոտ
դերձակ
դերեւ
դեւ
դէզ
դէմ
դէմ յանդիման
դէմք
դէպ >դիպուած, ի դէպ
դէպի
դէպք
դէտ >դիտել, ակնդէտ
դժնեայ-դաժան
դժոխք
դժուար
դիւային
դիւանագէտ
դիւթ
դիւրամէտ
դիւրավառ
դի(ւ)ցապաշտ
դղեակ
դշխեմ
դշխոյ
դող
դողդոջ
դոյզն-չնչին
դոյլ
դուզնաքեայ-քիչ, փոքր
դոյն-այդ

դոփիւն
դռնբացէք
դսրովել-պարսավել
դրոյլ-դռնապան
դրոյթ
դրոշմ
դրուագ
դրուատել
դրօշ
դօշաբ

-Ե-

Եդեմ
եզերք
եթեր
եթէ
ելակէտ
ելեւէջ
եկեղեցի
եղբօրորդի
եղեամ(ն)
եղեռն
եղեւնի
եղէգ(ն)
եղջիւր/եղջեւր
ենթակայ
եռամեայ
եռօրեայ
երբեմն
երբեւէ
երբեւիցէ
երբէք/երբեք

երէ(/ա)խայ
երեկ/երէկ
երեկոյ
երեկոյեան
երես
երեր
երեւալ
երեւոյթ
երեւութական
երէք
երէ-որսի կենդանի
երէզ-քարուտ
երէց
երիցագոյն
երիվար
երկաթեայ
երկամեայ
երկարամեայ
երկեակ
երկեամ-երկամյա
երկիւղ
երկուրեակ
երկոքեան-երկուսն էլ
երկօրեայ
եւ
եւեթ
եօթ(ն)
եօթնօրեայ

-Զ-

Զայրոյթ
զանգուած

զարթօնք
զաւակ
զաւեշտ
զբօսնել
զբօսաշրջիկ
զբօսավայր
զգոյշ
զգուշօրէն
զգօն
զե(ղ)խ
զեկոյց
զեղջ >զղջում
զեն-զոհ
զեռուն
զեփիւռ
զէյթուն
զէն >զինել, ապազէն
զէնք
զինուոր
զկեռ
զոհ
զոյգ
զով
զուարակ-հորթ
զուարթ
զուարճ
զուգամէտ
զրոյց
զօդել
զօդուած
զօծել
զօշ-ամոթալի
զօշաքաղ-փողասեր, ագահ



զօշոտ-անառակ
զօր, -ք, -ութիւն
զօրահանդէս
զօրավար
զօրաւոր
զօրավիգ
զօրեղ
զօրէն-նման

-Է-

Էապէս
-էք (գրէ՛ք)

-Ը-

Ըմբոշխնել
ըմբոստ
ընդամէնը
ընդգետնեայ
ընդդէմ
ընդերկրեայ
ընդերք
ընդէ՞ր-ինչու՞
ընդհակառակն
ընդհանուր
ընդհատ
ընդոծին
ընդոյր-հանդարտ
ընդվզել
ընթերակայ

ընթերցուած
ընծայ
ընկերովի
ընկէց
ընկէցիկ/ընկեցիկ
ընձենաւոր
ընձիւղ
ընտանեօք
ընտրեալ
ըստ արժանւոյն
ըստինքեան
ըստ կարելւոյն

-Թ-

Թագաւոր
թանկարժէք
թաւ
թափօն
թափօր
թեզանիք-հագուստի երկար թև
թեթեւ
թել
թէկն/թէկն-թիկունք
թեղ-դեզ
թեղօշ-կաղնի
թեմ/թէմ
թեշիկ-խլիկ
թեր
թերթօն
թերմոն-տաքացրած գինի

թերութիւն
թեւ
թեփ
թեք
թզենի
թէ
թէական
թ(է)ատրոն
թէեւ
թէզ-շուտ
թէժ
թէկուզ
թէյ
թէպէտ
թիավարել
թիթեղ
թիթեռ
թիւ
թիւր
թշուառ
թոկ
թոհ ու բոհ
թող
թոյլ
թոյն
թոյր-երանգ
թոնիր
թոշակ/թօշակ
թոռ(ն)
թովիչ
թորել
թուաբանութիւն
թուական
թուայ-թավա, օջախ, թոնիր

թունաւոր
թոք
թրուշայ-ուլունք, հասարակ քան
թօգ
թօթափել
թօթով
թօն-անձրեւ, խոնավութիւն
թօշնել
թօռ-տկար

-Ժ-

ժամկէտ
ժամօրինէք
ժանեակ
ժանեկաձեւ
ժանուար-գահավորակ
ժապաւէն
ժէտ >ախտաժէտ
ժխոր
ժողով
ժողովուրդ
ժոյժ-համբերել
ժօռատ-անատամ

-Ի-

ի դէպ
ի զէն
ի զօրոյ
ի հեճուկս
ի մէջ
ինչեւէ
ինչեւիցէ
ինչպէս
ինքնըստինքեան
իջեւան
ի վերջոյ
իրաւ
իրօք
իցիւ-երանի
իւղ/եւղ
իւր
իւրայատուկ
իւրաքանչիւր
իւրովի

-Լ-

Լայքա(յ)-բաց կարմիր ներկ
լաւ
լաւագոյն
լեառն
լեարդ
լէգէոն/լէգէոն
լեզուաբան
լեղի
լե(ա)շկ-մաշված, լերկ
լեսան-սրաքար
լերկ
լէզ >լիզել, արալէզ



լիազօր
լիայոյս
լիովին
լիսեռ(ն)
լիարժէք
լօգանք
լոկ
լող
լոյծ >լուծարք,անդամալոյծ
լոյս
լոյց >լուցկի, ճրագալոյց
լոր
լորձ
լորտու
լուանալ
լումայ
լուսաւոր
լուսնկայ
լռելեայն
լօդիկ-վերարկու
լօլիկ
լօշ-հաց
լօշտակ
լօռ/լոռ-մամուռ

-Խ-

Խաբեբայ
խաբէութիւն
խահուէ-սուրճ
խաղողօրինէք
խայտաբղէտ
խաշոյ-արգանակ
Խաչվերաց
խարդաւանք
խարոյկ
խարտեաշ
խաւ
խաւար
խաւիծ
խեթել-հրել, քշել
խելք
խելօք
խեղ-հաշմ
խեղդել
խեղկատակ
խեղճ
խենէշ/խենեշ-թուլացոփ
խենթ
խեցբեկ-կցկտուր
խեցգի
խեւ
խէթ
խէժ
խէչ/խեչ-նեցուկ
խիլայ-ազնիվ հագուստ, պատմուճան
խիւս-փոխինդ
խլէզ
խմորեղէն
խնջոյք
խոզան
խոթել
խոժոռ
խոլ
խոլորձ
խոխոջիւն
խոկալ
խոհանոց
խոհեմ
խողովակ
խոյ
խոյզ >բնախոյզ, խուզարկու
խոյս տալ
խոյր
խոնարհ
խոնաւ
խոնջ
խոշոր
խոչընդոտ
խոպան
խոռոչ
խոստանալ
խոստովանել
խոտան
խոտոր
խորագէտ
խորան
խորթ
խորհուրդ
խորշ
խորշոմ
խորոտ
խորտիկ
խորովել
խոցել
խուսանաւել
խուփ
խռիւ



խռով
խստաբարոյ
խստիւ
խրոխտ
խօթ-հիվանդ
խօլ-անմիտ
խօնաւէր-համեղ ուտելիք սիրող
խօշիւն-սոսափյուն
խօսք
խօսել

-Ծ-

Ծածկոյթ
ծակոտկէն
ծաղկաւէտ
ծամօն
ծանօթ
ծառայ
ծարաւ
ծաւալ
ծեծ
ծեր
ծերպ
ծեփ
ծեքել-թեքել
ծէս
ծիածան
ծիծեռն(ակ)
ծղօտ
ծնեբեկ

ծնծղայ
ծննդեան
ծնօտ
ծոծրակ
ծոմ
ծոյլ
ծոպ
ծով
ծովահէն
ծովափնեայ
ծորալ
ծոց
ծուարել
ծուէն

**-Կ-**

Կաթողիկէ
կաթուած
կաթսայ
կալուածք
կահաւորել
կահոյր-սափոր, ջրաման
կահոյք
կաղանդչէք
կայ(ե)ան
կանեփ
կանթեղ
կանոնաւոր
կապելայ-գինետուն
կապոյտ
կապուտաչեայ
կառավարել
կառոյց
կատարեալ
կարապետ
կարեվէր/կարէվէր-սաստիկ վերք ստացած
կարեւոր
կարծեօք
կարկեհան-հրագույն քար
կարճառօտ
կարողչէք
կարպետ/կապերտ
կարօտ
կարօտակէզ
կարօտավառ
կաւ
կաւատ
կաւիճ
կաքաւել-պարել
կեանք
կեղ-խոց
կեղեւ
կեղեքել
կեղծ
կեղտոտ
կեմ-չվան
կենդանակերպ
կենցաղ
կեռ
կեր
կերոն-եկեղեցու մեծ մոմ
կերպ
կերտել
կէցցէ
կէցցես
կէզ >տօթակէզ, հրկիզել
կէս
կէտ
կինիկ-կրկես
կիրակնօրեայ
կիւրակէ
կիւս/կեւս-կախարդ
կծուութիւն
կղեր
կղզեակ
կճեայ-մարմարյա
կշեռք
կոգի-կարագ
կոթող
կոլոտ
կոխել
կոծ-ողբ
կոծոծ-փուշ
կոկել
կոկոն
կոկորդ
կոհակ
կող
կողմնապետ
կողոպտել
կողով
կողպէք
կողր-ճյուղ
կոճ
կոճղէզ-սոխուկ արմատ



կոյզ >ողկոյզ
կոյս
կոյտ
կոյր
կոն
կոնդ-բլուր, գե-րեզման
կոնդակ
կոնքեռ
կոշտ
կոչ
կոպ
կոռ
կով
կոտորել
կոր
կորե(ա)կ
կորիզ
կորիւն
կորկոտ
կոր(ն)չել
կորոյս
կորովի
կուզէկուզ
կուռէճ-դաժան
կոփածոյ
կռածոյ
կռիւ
կռուել
կտաւ
կտոր
կտրօն
կրիայ
կրէտ
կրծօն
կրկէս
կրտսեր
կրքոտ
կրօն
կրօնաւոր
կրօնասէր
կօշել-մունչալ
կօշիկ
կօշկեղէն

**-Հ-**

Հա
հագագ
հագնել
հագներգ
հագուստ
հազար
հազարամեայ
հազիւ
հազուադէպ
հալածել
հալաւ-զգեստ
հալչել
հալուէ-դառն հյութով բույս՝ դեղ
հալվայ-քաղցր ուտելիք
հակամէտ, -ադարձ
հակառակ
հակընդդէմ
հակինթ
հակիրճ
հաղորդ
հաճար
հաճկատար-կամա-կատար
հաճոյ
հաճոյք
համ
համազօր, -ափիւռ
համայն
համանուագ-սիմֆոնիա
համառ
համառօտ
համար
համարեա՛
համբակ-երեխա. աշակերտ
համբաւ
համեղ
համբոյր
համեմ
համեմատ
համենալ-ուշանալ
համետ
համընթաց
համոզել
համոյթ
համով
համր-մունջ
համօրէն-բոլոր
հայդուկ
հայեացք
հայելի
հայեցի
հայերէն
հայհոյել

հայր
հայրապետ
հայց
հանապազօրեայ
հանգամանք
հանգանակ
հանգիստ
հանգ(չ)ել
հանգոյն-նման
հանգոյց
հանդարտ
հանդերձ
հանդէպ
հանդէս
հանել
հանելուկ
հանճար
հանրագումար,
-ագէտ
հանք
հաշիւ
հաշմ
հաշուել
հաշուապահ,
-ագէտ
հաշտ
հաշտութիւն
հապա՛
հապճեպ
հառաչ
հասակ
հաս(ա)նել
հասարակ
հասկանալ
հասուն

հաստ
հաստատ
հասցէ
հատ(ան)ել
հատիկ
հատիճ-կուտ
հատկացեալ
հատոր
հատուած
հատուցել
հարազատ
հարաւ
հարեւան
հարթ
հարիւր/հարեւր
հարկ, -ահան
հարկաւ
հարկաւոր
հարճ
հարուած
հարուստ
հարս
հարց
հաց
հաւախօս
հաւան
հաւանօրէն
հաւասար
հաւաստի
հաւաստեաւ
հաւատ
հաւատարիմ
հաւաք
հաւաքածոյ
հաւաքոյթ

հաւկիթ
հեգել
հեգեմոն
հեգնել
հեզ
հեթանոս
հելլէն/հելլեն
հեծեալ
հեծեծանք
հեղգ-ծոյլ,
անհոգ
հեղել, -ուկ
հեղեղ
հեղինակ
հեղձ
հեմ/հէմ-հիմա
հենուել
հեշտ
հեռակայ
հեռատես
հեռու
հեսկ-հյուսված
բան, պարան
հեսկի-
գույնզգույն
պատատանք
հեստ-անհնա-
զանդ
հետ-հետ միասին
հետազօտել
հետախոյզ
հետայսու
հետեւել
հետզհետէ
հետիոտն



հետք
հեր
հերետիկոս
հե(/ա)րիսայ
հերիւն
հերիք
հերիւրանք
հերկել
հերձուած
հերոս
հերքել
հեւալ
հեքիաթ
հզօր
հէգ/հեգ/հէք-թշվառ
հէն-աւազակ
հէնց
հիանալ
հիասթափուել
հիասքանչ
հիմա(յ)
հիմար
հիմն
հիմնարկէք
հիմնօրհնէք
հին
հինգամեայ
հիւանդ
հիւթ
հիւլէ
հիւղ
հիւծել
հիւպատոս
հիւս
հիւսիս

հիւսկէն
հիւսն
հիւր
հլու
հմայիչ
հմուտ
հնազանդ
հնարել
հնչիւն
հոգաբարձու
հոգի
հոգեակ
հոգեխօս
հոգեւոր
հոգէառ
հոգս
հոլանի-բաց գլխով
հոլով-պտույտ. փո-
փոխություն
հոծ
հողատէր
հողմ
հողմնահար
հոմանի
հոմանիշ
հոյաշէն
հոյլ-բազմություն
հոյծ-հոծ, ողորկ
հոյն-հոն
հոն
հոնորար
հոռետես
հոռոմ-հույն. լատին
հոս-այստեղ
հոսանք

հով
հովանաւոր
հովիտ
հովիւ
հովուել
հովհար
հոտ-բույր
հոտաւէտ
հորդել
հորթ
հորիզոն
հորովել
հում
հուն
հունար
հունդ-սերմ
հունձ
հունչ
հունցել
հուպ-կիպ, մոտ
հուսկ-վերջում,
հետևինը
հուր
հպատակ
հպարտ
հպուել
հռետոր
հռհռալ
հռնդիւն
հռո(վ)մէական
հռչակ
հսկայ
հսկել
հտպիտ-խեղկա-
տակ

հրազէն
հրաժարումն
հրաժեշտ
հրահանգ
հրահրել
հրաման
հրանօթ
հրաշք
հրապարակ
հրապարակախօս
հրապոյր
հրաչեայ
հրավառ
հրատարակել
հրացանաւոր
հրաւէր
հրաւիրել
հրդեհ
հրեայ
հրեշտակ
հրել
հրէական
հրէատեաց
հրէշ
հրկէզ
հրճուանք
հրշէջ
հրոսակ
հրովարտակ
հրուանդան
հօտ-ոչխարների խումբ
հօտաղ
հօրան-այծերի խումբ
հօրեղբայր
հօրու-խորթ հայր

հօրոտ-մօրոտ-ջրերի և բույսերի ոգիներ
հօփալ-վայրի աղավնի

-Ձ-

Ձայնաւոր
ձեղուն
ձեռք
ձետ-դմակ, պոչ
ձեւ
ձէթ
ձիավարութիւն
ձիաւոր
ձիւն
ձիւթ
ձմեռ(ն)
ձող
ձոյլ
ձոր
ձորձ-քուրձ, շոր
ձուածեղ
ձուաձեւ
ձուլածոյ
ձօն

-Ղ-

Ղեկ
ղեկավար
ղօղանջ
ղօղել-թաքնվել, ծածկել



-Ճ-

Ճայ
ճանճկէն-ճանճաճերմակ
ճեղք
ճեմ
ճեմարան
ճենճեր-ծուխ, գոլորշի
ճեպ-շտապ
ճետ-սերունդ. արու զավակ
ճերմակ
ճիւաղ
ճիւղ
ճկոյթ
ճոխ
ճողոպրել
ճոն-մուշտակակար
ճոպան
ճոռոմ
ճորտ
ճռուողիւն
ճրագալոյց
ճօճ
ճօճանակ
ճօշ-բամբասանք
ճօշան-գոմեշի մորթուց գրահ

-Մ-

Մակոյկ
մախաղ-տոպրակ
մանանայ
մանաւանդ
մանեակ
մանկավարժ
մանրագոր-թունավոր մի բույս
մանրէ
մասնագէտ
մատեան
մատենագէտ
մատոյց
մատռուակ
մարգարէ
մարդամէջ
մարդամօտ
մարդպետ
մարմար(իոն)եայ
մարտահրաւէր
մաքրակիօն
մեթոդ
մելան
մելիք
մեծախօս
մեծայարգ
մեծարգոյ
մեկին/մէկին-միակ
մեկնել
մեհեան
մեղաւոր
մեղկ
մեղմօրէն

մեղմօրօր
մեղր
մեղք
մեղայ
մեռնել
մեռոն
մեսիա(յ)-փրկիչ
մետաղ
մետաքս
մետր
մերազնեայ-մեր ազգից
մերթընդմերթ
մերժել
մերկ
մերձակայ
մեք-մենք
մեքենայ
մէգ
մէզ
մէզար-սփռոց
մէկ
մէկզմէկ(ու)
մէնաւոր
մէջ
մէջընդմէջ
մէջք
մէտ >միտուած, համամէտ
մէրան-մակարդ
մէրուն-ձագեր հանած
մէց/մեց-ցեց, ապականություն
մթնկայ
մժեխ
միեւնոյն

միըստմիոջէ
միթէ
միմեանց
միջադէպ
միջակէտ
միջօրեայ
միջօրէական
միտուած
միւռոնօրհնէք
միւս/մեւս
միօրեայ
մնչիւն-հեծեծանք
մշակոյթ
մշտակայ
մոգ
մոգի
մոլոր, -ուել
մոլուցք
մոխիր
մողէս
մոմ
մոյգ/մոյկ-կոշիկ, սանդալ
մոյթ-նեցուկ
մոյծ >մուծանել, եկամոյծ
մոյն-վայելչություն
մոյր-մուրալը, ողորմություն
մորեխ
մորթ
մորի
մորմոք
մորոս-խենթ

մումիա
մտայղացում
մտայոյզ
մտավարժ
մտաւոր
մրգաւէտ
մրջիւն
մօտ
մօտակայ
մօտաւոր
մօր-ճահիճ, ցեխ
մօրաքոյր
մօրու-խորթ մայր
մօրուք
մօրուքաւոր
մօրս-տ.մօր

-Յ-

Յագենալ
յագուրդ
յազել-գոհել, գոհից ուտել
յածել-թափառել, պտտել
յախճապակեայ
յախնթոր-ծառայական, հասարակ
յախուռն
յածանաւ
յականէ-յանուանէ
յակինթ
յաղագս-մասին, համար
(յ)աղաչանք

յաղթ, -ել, -անակ,
յաղթահարել
յաճախ
յաճախորդ
յամառ
յամառօրէն
յամենալ-ուշանալ
յամոյր-այծյամ, վիթ
յամպար-ծաղկի տեսակ
յամր-դանդաղ
յամրահոս
յայնժամ
յայնկոյս-այն կողմ
յայնմհետէ
Յայսմաւուրք
յայտնապէս
յայտնել, -նի
յայտնութիւն
յայրատ-կրքոտ, անառակ
յանգ/յանկ-պատշաճ, հանդարտ
յանգել-վերջանալ
յանդգնել
յանդէպ
յանդիման
յանդիմանել
յանդուգն
յանկարծ
յանկերգ-կրկներգ
յանձանձել-հոգալ, մխիթարել
յանձնաժողով
յանձն առնել
յանձնարարել

յանձնել
յանուն
յանցագործ
յանցանք
յանցաւոր
յաշտ-զոհ
յաչաղանք-նախանձ
յաչս-աչքին
յապաղել
յապաւել-կրճատել
յաջող, -ութիւն
յաջորդ
յառաջ
յառաջադէմ
յառաջիկայ
յառել-սեւեռել
յառնել
յասմիկ
յասպիս-թանկ. քար
յատակ
յատանել-էտել
յատկանիշ
յատկապէս
յատկացուցիչ
յատկութիւն
յատուկ
յար (կից), -ակայ, -ատեւ
յարաբերութիւն
(յ)արալէզ
յարակատար
յարակից



յարահոս
յարամէտ
յարանուանութիւն
յարատեւ
յարացոյց
յարգել, -անք
(յ)արգոյ
յարդ-դարման
յարդարել
յարկ-տանիք, ծածկ
յարձակում(ն)
յարմար
յարմարաւէտ
յարութիւն
յարուց(ան)ել
յաւակնել
յաւակնոտ
յաւելեալ
յաւելուած
յաւերժ/յաւէրժ
յաւէտ
յաւիտեան
յափշտակել
յափրանք-հագուրդ. ձանձրոյթ
(յ)ելուզակ
յեղ
յեղաշրջել
յեղյեղուկ
յեղուկ
յեղց-լեցուն
յենակէտ
յենարան
յենուել
յենք

յեսան
յետ
յետագայ
յետադէմ
յետեւեալ
յետընթաց
յետին
յետմիջօրէ
յետնորդ
յետոյ
յետսմուտ
յերիւրանք
յեց-հենված
յիմար
Յինունք
յիշել
յիշատակ
յիշոց
յիսնամեակ
յիսուն
յիրաւի
յղանալ
յղել
յղի, -ութիւն
յղկել
յղփանալ
յո՞-ու՞ր
յոբելեան
յոբելեար
յոգնաբեկ
յոգնակի
յոգնել
յոլով-շատ, բազում
յոխորտալ
յողդողդ

յոյգ-ճան, վեգ
յոյզ
յոյժ
յոյլ-ծույլ, դանդաղ
յոյն
յոյս
յոյր-գեր, թավ
յոպոպ
յոռետես
յոռի
յովազ
յովատակ
յորդ
յորդաբուղխ
յորդահոս
յորդորել
յորձանք
յորջորջել
յուզել-փնտրել. խառնել
յուլիս
յուղարկաւորութիւն
(յ)ուղարկել
յունապ-մրգի տեսակ
յունար
յունարէն
յունիս
յունուար
յուշ
յուշանուէր
յուռթի-արգաւանդ

յուռութ-հմայութիւն
յուսալ
յուսահատ
յուսավառ
յստակ
յօգուտ
յօդ
յօդակապ
յօդացաւ
յօդուած
յօժար
յօնք
յօշել-ման(ատ)րել
յօշ(ոտ)ել
յօտել-էտել, կտրել
յօրայ-խորթ հայր
յօրանալ-հղփանալ. հոռանալ
յօրանջ
յօրինել
յօրինուածք

-Ն-

Նա
նաեւ
նախավկայ
նախատօնակ
նախօրէ
նախօրօք
նահապետ
նայ-խոնավ
նարգէս
նարօտ
նաւ
նաւաբեկ
նաւապետ
Նաւասարդ
նաւավար
նաւթ
նեարդ
նեկտար
նեղ
նենգ
նետ
ներգործել, -կայ
ներկ
ներհակ
ներս
ներքոյ
նեցուկ
նզովք
նժդեհ
նժոյգ
նիւթ
նշանդրէք
նշաւակել-խայտառակել
նշոյլ
նոխազ-արու այծ
նոճի
նոյն
նոյնպէս
նորաշէն
նորավէպ
նորոգ
նուազ
նուազ
նուաղել
նուաճել
նուաստ
նուէր
նուիրակ
նոքա
նսեմ
նրբօրէն
նօթ
նօթճել-հայտնել, պատմել
նօսր
նօտար-գրագիր
նօտր-գրի տեսակ

-Շ-

Շագոյր-պայուսակ, մախաղ
շահաւէտ
շահէն-բազե
շաղաւօտ
շառաւիղ
շատախօս
շարահիւսել
շարայարել-կցել
շարաւանդ-ոտքի կապ
շաւառ-ցորենի ծղոտ. եղեգ
շաւերք-արևելյան նվագարան
շաւիղ



շափի(ւ)ղայ-գոհար
շեղ
շեղբ
շեղջ
շեմ
շեշտ
շերեփ
շերտ
շեփոր
շէթ-խենթ
շէկ
շէն
շէնշող
շէնք
շէջ >անշէջ, շիջանել
շէր-երգ, տաղ
շիկաւուն
շիւ
շկօթակ-ցկյանս աքսոր
շղթայ
շնորհանդէս
շոգի
շոգմոգ-բանսարկու, շողոքորթ
շող
շողոքորթ
շոր
շորթել
շուայտ
շուարել
շուկայ
շրէշ
շրշիւն
շփոթ
շքահանդէս
շօթ-նկանակ
շօշափել
շօռ

-Ո-

Ո-ով
ոգեւորութիւն
ոլոռ
ոլոր
ոլորտ
ոլոք-սրունք
ողկոյզ
ողջակէզ
ողջոյն
ողողել
ողորկ
ողորմ
ոյժ-ուժ
ոռոգել
ոսկեհուռ-ոսկեզարդ
ոսկեղէն
ոսկեզօծ
ոսկեօղ
ոսոխ
ոսպնեակ
ոստրէ-խեցեմորթ
ով
ովեւիցէ
ո(օ)վսաննա(յ)
ոտանաւոր
որայ-ցորենի խուրձ
որբեւայրի
որգոն-օրինակ
որդեակ
որդեգիր
որեար-ժողովուրդ
որեւէ
որեւիցէ
որկոր
որոգայթ
որոճալ
որոմ(ն)
որոշ
որովայն
որովհետեւ
որոտընդոստ
որպէս
որսորդ
ուղեակ
ուղեղ
ուղեցոյց
ուղեւոր
ուղէշ/ուղեշ-ճյուղ
ուրեմն
ուտեստ
ուրեւէ
ուրեք-ինչ-որ տեղ
ուրոյն
ուրուական

-Չ-

Չգոյ-գոյություն չունեցող

չէչաքար
չերէց-անարժան քա-
հանա
չէական
չէզոք
չինարէն
չկայ
չոր
չորեքշաբթի
չուան
չուառ-թշվառ
չուել

-Պ-

Պահածոյ
պաճոյճ
պայ-առանսպելական էակ
պանթէոն
պաշտօն
պաշտօնավարել
պաշտօնեայ
պապա-հայրիկ
պառաւ
Պասքա(յ)/Պասէք-
գատիկ
պատանեակ
պատեան
պատեհ
պատենաւոր
պատիւ
պատկեր
պատճէն
պատմավէպ
պատնէշ
պատուական
պատուաւոր
պատուէր
պատուիրան
պատուհաս
պատրիարք
պատրոյգ
պատրուակ
պարագայ
պարաւանդ-կապանք,
շղթա
պարգեւ
պարէգօտ
պարէկ
պարէն
պարէտ
պարթեւ
պարկեշտ
պարոյր
պարսաւ
պարսկերէն
պարտէզ
պարտիզպան
պեղել
Պենտեկոստէ-
հիսնօրյակ
պետ
պերճ
պէպէն
պէս
պէտ >անպէտք, պի-
տանի
պիտոյք
պղնձեայ
պնակալէզ
պողոտայ
պողպատ
պոչ
պոռոտ
պորտաբոյծ
պո(ւ)էտ
պռօշ
պռօսխումէ-ուշ
դնենք
պտոյտ
պրօն-այծի մազից
բուրդ

-Ջ-

Ջատագով
ջարդուածք
ջարդօն
ջերմ
ջոկ
ջորի
ջրհոս
ջրուոր
ջրվէժ
ջրօրհնէք

-Ռ-

Ռամկօրէն
ռետին
ռոճիկ



-Ս-

Սա
սալա(յ)-կողով
սալայատակ
սալոր
սակաւ
սամոյր
սառոյց
սարեակ
սարկաւագ
սափոր
սեամ-շեմ
սե(ա)ւ
սեթեւեթ
սեխ
սեղան
սեղեխ-սիրեկան
սեղմ
սենատոր
սենեակ
սենեկապետ
սեպ
սեպուհ
սեռ
սեր (կաթի սեր)
սերկեւիլ
սերմ
սերտ
սեւաթոյր
սեւաչեայ
սեւեռել
սէգ
սէզ
սէր
սթափուել
սիգաճեմ
սիղոբայ-վանկ, տառ
սիսեռ
սիրակէզ
սիրայօժար
սիրավէպ
սիւն
սի(ւ)ք-հովիկ
սկեսուր
սկեսրայր
սկիւռ
սնամէջ
սնգոյր-շպար
սնոտի
սոթ-պինդ. թանձր
սոխ
սողալ
սողոսկել
սոճի
սոյզ >սուզակ, ջրասոյզ
սոյլ >սուլել
սոյն
սոյր >սուրալ, արշաւա-
սոյր
սոսինձ
սոսկ
սով
սովորոյթ
սովորութիւն
սոր-խոռոչ, անցք
սուաղել
սուին
սուսեր
սոփեստ
սոփեր-գիր, գրր-
ված
սոփէ-տառ, գիր
սպայ
սպառազէն
սպասեակ
սպարապետ
ստայօդ
ստեղն
ստեպղին
ստերջ
ստեւ-բուրդ
ստէծ-ջուլհակի
գործիք
ստէպ
ստոյգ
ստորակէտ
ստորոգեալ
ստորոտ
ստուար
ստուգիւ
ստուէր
սրախողխող
սրուակ
սքեմ
սքօղել/սքողել
սփիւռ
սփոփել
սօթ-տունկի մի-
ջուկ
սօլ(եր)-կոշիկ,
տրեխ
սօսանուէր
սօսափիւն
սօսի

**-Վ-**

Վաղիւ
վաղվաղակի
վաղօրօք
վայ
վայել
վայրէջք
վայրկեան
վայրկենապէս
վաշտապետ
վառեակ
վառուած
վառօդ
վատշուէր-չարագործ
վարագոյր
վարժապետ
վարսավիր
վաւաշոտ
վաւեր
վեհօրէն
վեր
վերայ
վերյուշ
վերոյիշեալ
վերջ
վերջակէտ
վերստին
վերտ-ոլորուն
վեց
վէգ-վեճ, կռիվ
վէգ-հանդուգն
վէժ >վիժել, ջրվէժ
վէճ
վէմ
վէպ
վէս
վէստ/վեստ-իշխան, ազատ
վէտվէտալ
վէրք
վիրաւոր
վկայ
վսեմ
վրայ
վրդովել
վրէժ
վրէպ >վրիպել, անվրէպ

**-Տ-**

Տանուտէր
տաշեղ
տառեխ
տասնեակ
տարակոյս
տարէց
տարէցտարի
տար(ու)բեր
տաւիղ
տգէտ
Տեառնընդառաջ
տեղ(ի)
տեղեկութիւն
տենդ
տենչ
տեսակ
տեսակէտ
տեսնել
տետր
տերեւ
տէգ
տէր
տէրութիւն
Տէրունական
տիեզերք
տիւ
տղայ
տնաշէն
տնօրէն
տնօրինէք
տոգորել
տոկալ
տոկոս
տոհմ
տողան
տողընդմէջ
տոմար
տոմս
տոյժ
տոչոր
տոտեմ
տորո(ւ)ն
տուայտանք
տուարած-խաշնարած
տուայտանք
տուընջեան
տրեխ
տրոհել
տրորել
տօթ
տօթակէզ
տօն
տօնահանդէս
տօսախ-թուփ

**-Ր-**

Րոպէ
րոպէական

**-Ց-**

Ցաւօք
ցել
ցեղապետ
ցերեկ
ցեց
ցնորք
ցուք
ցոյց
ցորեան/ցորէն
ցոփ
ցրօնք
ցօղ
ցօղուն

**-Փ-**

Փաթեթ
փախստեայ
փայտաշէն
փայտեայ
փառասէր
փառատօն
փառաւորեալ
փաստօրէն
փեթակ
փեղկ
փեսայ
փետել
փետուր
փետրուար
փերեզակ-մանրավաճառ
փերթ-կտոր
փէշ
փէք-թշվառ
փիլիսոփայ
փիլոն
փիւնիկ
փոթորիկ
փոխարէն
փոխինդ
փոկ
փող
փոյթ
փոշի
փոս
փոր
փորձագէտ
փութաջան
փոփոխել
փոքր
փսիրայ-չոր խոտ, ճյուղ

**-Ք-**

Քահանայ
քաղաքավարի
քաղցկեղ
քամելէոն
քանոն
քառեակ
քարակոփ
քարտէզ
քաւարան
քաւդեայ-աստղագուշակ
քենի
քեռի
քերական
քերել
քերթող
քերծել
քերծէ-որսի շուն
քերովբէ
քէն
քէշ-աղանդ
քիմիա
քինախնդիր
քիւ
քնէած
քոյր
քոյրաթիւ
քոս
քուէ
քուէարկել
քութէշ-հիվանդության տեսակ
քուրայ

քուֆտայ
քրեական
քրիստոնեայ
քրիստոնէական
քօղ/քող
քօղարկել
քօշ-արու այծ

-Օ-

Օդաւէտ
օթեակ
օթեւան/օթեվան
օծապտոյտ
օտարերկրեայ
օրաւուր
օրէն
օրէնսգէտ
օրէնք
օրէցօր
օրըստօրէ
օրիորդ
օրհնաւոր
օրհաս
օրհնութիւն
օրօր
օրօրոց

-Ֆ-

Ֆէս
ֆէոտալ



## Հատուկ անուններ

Աբէլ
Ազարիա
Աթէնք
Աղայեան
Աղուանք
Ամասիա
Անանիա
Անդրէաս
Անթիլիաս
Աննա
Անոյշ
Անտիոք
Աշխէն
Ասիա
Արիստակէս
Արմէն
Արուսեակ
Արսէն
Արտաշէս
Աւետիքեան
Աքիլլէս
Բաքկէն/Բաբգէն
Բարդ(թ)ուղիմէոս
Բարսեղ
Բենիամին
Բիւզանդիա
Բութանիա/
Բիւթանիա
Գաբրիէլ
Գալիլիա
Գայ(ի)անէ
Գեդէոն
Գեւորգ
Գէորգ
Գուրգէն
Դանիէլ
Դաւիթ
Դիոս
Դուին
Եդեսիա
Եզեկիէլ
Եղիա
Եղիազար
Եղիայեան
Եմէն
Երեմիա
Երեւան
Երուսաղէմ
Եւդոկիա
Եւրոպա
Զաբէլ/Զապէլ
Զակքէոս
Զաւէն
Զաքարիա
Զենոն
Զէյթուն
Թադէոս
Թէոդոս
Թէոդորոս
Իսրայէլ
Լիւսիա/Լուսեայ
Խորէն
Կայէն
Կարապետ
Կարէն
Կարինէ
Կեսարիա
Կիլիկիա
Կիւրեղ
Կլէոպատրա
Կ.Պօ(ո)լիս
Հայկանոյշ
Հայրապետ
Հմայեակ
Հոմերոս
Հռիփսիմէ
Հրաչեայ
Մադ(տ)աթիա
Մաղաքիա
Մամիկոնեան
Մանէ
Մանուէլ
Մատթէոս
Մարթա
Մարիամ
Մարինէ
Մեդէա
Մեծամօր
Միքայէլ
Մովսէս

Յաբէթ
Յակոբ
Յասմիկ
Յարութիւն
Յիսուս
Յոբ
Յոհան
Յովակիմ
Յովասափ
Յովհաննէս
Յովհաննիսեան
Յովնաթան
Յովնան
Յովսէփ
Յորդանան
Յուդա
Յուլիանոս
Յուլիոս
Յունաստան

Յուսիկ
Նազարէթ
Նանէ
Նարինէ
Ներսէս
Նոյ
Նոյեան տապան
Նուարդ
Նունէ
Շահէն
Շաւարշ
Պետրոս
Պտղոմէոս
Պօղոս
Ռաֆայէլ
Ռուբէն
Սամուէլ
Սադայէլ
Սառա

Սարոյեան
Սեդա
Սեւան
Սիմէոն
Սիոն
Սոնա
Սոնիա
Սուրէն
Սոֆիա
Սրապիոն
Վազգէն
Վահէ
Վաչէ
Վիգէն
Վիկտորիա
Վրթանէս
Տարիէլ



## Բառամիջում և բառավերջում *է* ունեցող բառեր

Ալէլուիա
ախտաժէտ/-ժետ
աղէ՛
աղէկ
աղէտ
աղուէս
ամէն
~~այժմէայ~~
անէծք
աշխէտ
աշտէ/աշտեայ
ապաւէն
ապաքէն
առնէտ
ասպարէզ
աստէն
արալէզ
արդէն
արժէք
ափսէ
բաբէ
բազէ
բեհէզ/բեհեզ
բզէզ
բէժ
բէկ
բուէճ
բրէտ
~~բօթ~~
գէզ
գէթ/գեթ

գէշ
գէջ
գէս
-գէտ
գէր
գմբէթ/գմբեթ
գոնէ
գործունէութիւն
գուցէ
դէզ
դէմ
դէմք
դէպ
դէպի
դէպք
դէտ
եթէ
երբեւիցէ
երբէք/երբեք
երէկ/երեկ
երէ
երէզ
երէց
զէն
զէնք
զօրէն
-էք (գրէ՛ք)
ընդէ՞ր
ընկէց
ընկէցիկ/ընկեցիկ
թէմ/թեմ

թէ
թէական
թ(է)ատրոն
թէզ
թէժ
թէյ
ժէտ
ի դէպ
ի զէն
լեգէոն/լէգէոն
լէզ
խենէշ/խենեշ
խէթ
խէժ
խէւ/խեւ
խլէզ
ծէս
ծուէն
Կաթողիկէ
կարէվէր/կարեվեր
կեցցէ
կէզ
կէս
կէտ
կիւրակէ
կողպէք
կոճղէզ
կուռէճ
կրկէս
հալրւէ
հանդէս

հասցէ
հելլէն/հելլեն
հէգ/հեգ/հէք
հէն
հէնց
հիւլէ
հրաւէր
հրէական
հրէշ
ձէթ
մանրէ
մէգ
մէզ
մէկ
մէնաւոր
մէջ
մէջք
մէտ
մէրանի
մէրուն
մէց
Մողէս
յականէ-
յանուանէ
յայնմհետէ
յանդէպ
(յ)արալէզ
յաւէրժ/յաւերժ
յաւէտ
նարգէս

նուէր
շահաւէտ
շահէն
շէթ
շէկ
շէն
շէնշող
շէնք
շէջ
շէր
ոստրէ
որպէս
չէզոք
չինարէն
պանթէոն
պատճէն
պատնէշ
պատուէր
պարէն
պարէտ
պարտէզ
պէս
պէտք
պոէտ
սէգ
սէզ
սէր
սիգաճէմ
ստէպ
վատշուէր

վէգ
վէզ
վէժ
վէճ
վէմ
վէպ
վէս
վէստ/վեստ
վէտվէտալ
վէրք
վրէժ
վրէպ
տարէց
տէգ
տէր
ռոպէ
փէշ
քամելէոն
քարտէզ
քերծէ
քերովբէ
քէն
քէշ
քուէ
քութէշ
օրէն
օրէնք



Ակօս
աղօթք
աղօտ
աղօրիք
ամօթ
անօթ
անօթի
անօսրապարօշ
առաւօտ
աստանօր
արտօնեալ
արտօսր
արօս
արօտ
արօր
բօթ
գեղօն
գողօն
գործօն
գօս
գօտի
դրօշ
եօթն
զարթօնք
զբօսանք
զօդել
զօծել
զօշ
զօրք
թափօն
թափօր
թերթօն
թօշակ/թոշակ
թօզ
թօթափել
թօթով
թօն
թօշնել
թօպ
ժօռատ

ի զօրոյ
լօդիկ
լօլիկ
լօշ
լօշտակ
լօռ/լոռ
խօթ
խօլ
խօնասէր
խօշիւն
խօսք
ծանօթ
ծղօտ
ծնօտ
կարօտ
կրօն
կօշել
կօշիկ
համառօտ
համօրէն
հետազօտել
հզօր
հօտ
հօտաղ
հօրան
հօրոտ
հօրեղբայր
հօրու
հօփալ
ձօն
ղօղանջ
ղօղել
ճօճ
ճօշ
ճօշան
մօտ
մօր
մօրաքոյր
մօրու
մօրուք

յօգուտ
յօդ
յօժար
յօնք
յօշել
յօշոտել
յօտել
յօրայ
յօրանջ
յօրինել
նախօրոք
նարօտ
նօթ
նօթճել
նօսր
նօտար
նօտր
շկօթակ
շօթ
շօշ
շօշափել
պաշտօն
պռօսխումէ
պրօն
ջարդօն
սօթ
սօլ
սօսափիւն
սօսի
վառօդ
տօթ
տօն
ցրօնք
ցօղ
ցօղուն
քօղ
քօղարկել
քօշ
օրօր
օրօրոց

## Բովանդակություն


Երկու խոսք ընթերցողին 3

Ավանդական ուղղագրության և արտասանության կանոններ 6

Բառացանկ 10

Հատուկ անուններ 32

Բառամիջում և բառավերջում է ունեցող բառեր 34

Բառամիջում օ ունեցող բառեր 36



ՆՈՐԱՅՐ ՓԻՓԻՍՅԱՆ

Բառացուցակ հայերենի ավանդական ուղղագրության

Երևան-2009

Հայրենի աջակիցների միավորում

ՈՍԿԵՂԵՆԻԿ